ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | թիվ 27 | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | Միասնական կայք 2022.06.13-2022.06.26 Պաշտոնական հրապարակման օրը 22.06.2022 | *Ընդունման վայրը* | Մոսկվա |
| *Ընդունող մարմինը* | Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիա | *Ընդունման ամսաթիվը* | 13.02.2018 |
| *Ստորագրող մարմինը* | Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ | *Ստորագրման ամսաթիվը* | 13.02.2018 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 14.08.2018 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ (ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԿՈԼԵԳԻԱ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2018 թվականի թիվ 27 քաղ. Մոսկվա

## ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ (ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 58-րդ հոդվածի 2-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 22-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան ***որոշեց.***

1. Հաստատել կից ներկայացվող՝ Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտներին ներկայացվող Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջները:

2. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական միության մեկ անդամ պետության տարածքից Եվրասիական տնտեսական միության մեկ այլ անդամ պետության տարածք տեղափոխվող ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրում՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը ներառված կազմակերպությունների և անձանց նկատմամբ, սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 18 ամսվա ընթացքում թույլատրվում է գործունեության իրականացում Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության օրենսդրությամբ նախկինում սահմանված՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտներին ներկայացվող պարտադիր պահանջներին համապատասխան, որի տարածքում տեղակայված է համապատասխան օբյեկտը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 180 օրացուցային օրը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝** **Տ. Սարգսյան**

*ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի փետրվարի 13-ի թիվ 27 որոշմամբ*

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 22 հունիսի 2022 թվական:**